Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Դ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ, Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԾԱՂԿԱՁՈՐԻ «ԽԱՉԵՐ» ՀՆԱՎԱՅԱՐԻ ԵՒ ԴԱՄԲԱՆԱԴԱՇՏԻ 2007-2008 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ծաղկաձորը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառի հնագույն բնակավայրերից է: Գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Թեղենիս լեռան արեւելյան լանջին, ծովի մակերեւույթից բարձր է 1700-1780: Հնում այն կոչվել է Ծաղկոցաձոր, ապա՝ Ծաղկունյաց ձոր եւ Կեչառիս[1]: Բնակավայրը հայտնի է եղել իր պղնձահանքերով: Վաղ միջնադարում այն գտնվում էր Վարաժնունի նախարարական տան տիրույթներում, եղել Արշակունի արքաների ամառանոցը: Որոշ ուսումնասիրողներ այն տեղորոշում են Նիգ գավառի սահմաններում, սակայն տարածված տեսակետը՝ Վարաժնունիքում տեղադրելն է[2]: Թ. դարից անցնում է Պահլավունիների Ապիրատյան ճյուղին, որի տիրապետության շրջանում էլ հիմնադրվում է Կեչառիսի վանական համալիրը: Հիշյալ իշխանական տան նշանավոր դեմքերից մեկը՝ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը 995-1003 թթ. կառուցում է վանքի մայր տաճարը՝ Ս. Գրիգոր եկեղեցին: Ապիրատյանների հովանավորությամբ վանքն արագորեն ծաղկում է ապրում՝ վերածվելով միջնադարյան Հայաստանի խոշորագույն հոգեւոր եւ կրթամշակութային կենտրոնի: ԺԳ.-ԺԴ.դարերում Կեչառիսն անցնում է Պռոշյաններին, որոնցից մի քանիսը թաղված են եղել վանքի գերեզմանատանը: ԺԴ. դ. հիշատակվում է Դարաչիչակ անունով: Պարսկական տիրապետության շրջանում եղել է Երեւանում նստող Սարդարների ամառանոցը[3]: 1947 թ վերանվանվել է Ծաղկաձոր:

Քաղաքից շուրջ 2 կմ արեւելք, Թեղենիսի արեւմտյան բազուկներից մեկի հարթ գագաթին պահպանվել են «Բերդի գլուխ» կոչված հնավայրի ավերակները: Այն տարբեր մեծության բազալտի քարերից, առանց կրաշաղախի կառուցված մի բավական հզոր ամրոց է, որի պարիսպներն ունեն մինչեւ 3 մ լայնություն եւ մինչեւ 1,5 մ պահպանված բարձրություն: Ամրոցի հյուսիս-արեւմտյան հատվածում նշմարվում են մեծ չափերի կիսաբոլոր աշտարակի ավերակները, որպիսիք բնորոշ են Հայաստանի վաղ միջնադարյան մի շարք հուշարձանների (Վարդենուտ, Կռշ, Երնջատափ եւ այլն): Ամրոցի գետնեբես նշմարվող հատվածները հիմք են տալիս դիտարկելու բնականից անառիկ տեղանքի ընձեռած հնարավորություններն առավելագույնս օգտագործելով կառուցված վաղմիջ-

1 **Թ. Հակոբան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 2, Երեւան, 1988, էջ 834:

2 Տարակարծությունը կապված է միջին դարերում Հայաստանի վարչատարածքային սահմանների անկայունության հետ, գավառների սահմանները տարբեր դարերում փոփոխությունների են ենթարկվել:

3 Տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, Կեչառիսի վանքը (պատմական ակնարկ), Երեւան, 2004, էջ 18:

նադարյան ամրոցի առկայությունն այստեղ: Պետք է ենթադրել, որ այս ամրոցը պատկանել է Վարաժնունի նախարարական տանը, որի տիրույթների կարեւոր բնակավայրերից էր Ծաղկոցաձորը:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 2007-2008 թթ. պեղումներ իրականացրեց Ծաղկաձոր քաղաքի տարածքում՝ «Խաչեր» կոչվող հնավայրում եւ քաղաքի հյուսիսային մասում գտնվող դամբանադաշտում:

«Խաչեր» հանդամասը գտնվում է Ծաղկաձոր քաղաքի հարավ-արեւմտյան բարձրունքներից մեկի վրա, իր նպաստավոր ստրատեգիական դիրքով Կեչառիսի վրա իշխող բարձրադիր բլրի համեմատաբար հարթ գագաթին, զբաղեցնում է շուրջ 1500 մ² տարածություն: Տեղանքը արեւելք-արեւմուտք ձգվող ձվածիր մի հարթություն է, որը զգալիորեն վնասվել է տարբեր միջամտությունների պատճառով: Հնավայրն առանձնապես տուժել է վերջին տարիներին, երբ այստեղ տեղակայվել է երկու անտենա՝ իրենց կից ծառայողական շինություններով: Առաջինը հրվանդանի արեւմտյան եզրին գետեղված «VivaCell» ընկերության բջջային կապի աշտարակն է, երկրորդը՝ ՀՀ Տրանսպորտի եւ կապի նախարարության հեռուստատեսային կայանն է, տարածքի արեւելյան մասում: Երկու անտենաների միջեւ վերջին տարիներին անցկացվել են էլեկտրական հաղորդալարերի գծեր, որոնց հենասյուները ոչ միայն մեծ վնաս են հասցրել հուշարձանին, այլեւ ներկայումս խոչընդոտ են պեղումներին: Հուշարձանախմբին մեծ վնաս է հասցվել պետական բանկին պատկանող հասարակության կառուցման ժամանակ:

2007 թ. պեղումների ժամանակ արտաքուստ բացվել են հնավայրի՝ արեւելքից արեւմուտք ձգվող պարսպապատի հարավային հատվածը՝ 37 մ երկարությամբ: Այն շարված է տարբեր մեծության բազալտե զանգվածեղ քարերով եւ հողի շաղախով: Նոր բաց հատվածում, իրարից 10 մ հեռու գետեղված են երկու ուղղանկյուն աշտարակներ (կոնտրֆորս), որոնցից արեւելյանը անհամեմատ լավ է պահպանվել: Պարիսպն ունի 3,2 մ լայնություն : Պահպանված բարձրությունը մեկ մետր է: Ներքուստ բացվել է պարսպի հյուսիսային ճակատը, ավելի քան 20մ երկարությամբ, որն այդ հատվածում անհամեմատ վատ է պահպանվել: Շարված է մանր ու միջին մեծության բազալտե ճեղքված քարերով, ունի ընդամենը 30-50 սմ բարձրություն: Հետախուզական պեղումների ժամանակ այս հատվածում բացվել են երեք սենյակների առանձին մասերը, որոնք նախատեսվում էր ամբողջությամբ պեղել 2008 թ.: Պեղումների միջոցին հայտնաբերված հնագիտական նյութերը մեծ թիվ չեն կազմում, քանի որ դրանք առայժմ միայն վերին շերտերից են: Դրանք հիմնականում թվագրվում են Թ.-ԺԴ. դարերով: Հնավայրի արեւելյան հատվածում՝ ճանապարհի շինարարության պատճառով դեպի թեք լանջը հրված հողերի մեջ, հայտնաբերվեց Ժ.- ԺԱ. դարերին բնորոշ, բազալտե մի խաչքար: Հուշարձանի նախնական ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ գործ ունենք հնագույն մի ամրոցի հետ, որը գործել է նաեւ Ապիրատյանների եւ Պռոշյանների շրջանում, հանդիսանալով այս իշխանական տների Կեչառիսյան նստոցը: Ամրոցի թվագրության, այդ հենքի վրա նաեւ պատկանելության խնդիրը լուծելու համար որոշվեց 2008 թ. շարունակել նախորդ տարում սկսված պեղումները: Ուստի եւ 2008թ. հու-

լիս-օգոստոս ամիսներին վերսկսվեցին աշխատանքներն հնավայրում: Պեղումներն ընթանում էին երկու տեղամասերում: Առաջինն ընկած էր պարսպից ներս, դեպի հյուսիս՝ արեւելք-արեւմուտք ուղղվածությամբ, իսկ երկրորդը՝ պարսպի արտաքին հատվածն է, կրկին արեւելք-արեւմուտք ուղղվածությամբ: Ողջ տեղամասը ծածկված էր Ծաղկաձորի բնությանը հատուկ խիտ բուսականությամբ:

Պարսպից ներս պեղվեց 42,90մ երկարությամբ եւ 2,80մ - 5,40մ լայնությամբ մի տարածք: Լայնության նման տատանումները պայմանավորված են VivaCell-ի կայան տանող ճանապարհի լայնության տատանումներով: Իբրեւ 0 կետ պայմանականորեն վերցվել է էլեկտրասյան բետոնե հարթակը:

Պարսպից ներս փորձում էինք գտնել կառուցապատման որեւէ հետք՝ պարզելու Ծաղկաձորի միջնադարյան ամրոցի պաշտպանական համալիրի ամրաշինական սկզբունքները:

Պեղման աշխատանքների արդյունքում բացված միակ ճարտարապետական կառույցը մի փոքրիկ քառակուսի սենյակ է, որը գտնվում է պարսպից հյուսիս՝ 20սմ հեռու եւ պարսպի պահպանված մակերեսից բարձր է շուրջ 40սմ: Դրսից սենյակի պատերի երկարությունն է՝ հյուսիսայինը՝ 4,36սմ, հարավայինը՝ 4,25սմ, արեւմտյանն ու արեւելյանը՝ 4,35սմ: Ներքուստ՝ հյուսիսայինը՝ 2,95սմ, հարավայինը՝ 2,90սմ, արեւմտյանը՝ 2,95սմ, արեւելյանը՝ 3,00սմ: Պատերի հաստությունը՝ 54-62սմ: Սենյակի հարավային պատի արեւմտյան հատվածում շուրջ 90սմ լայնությամբ մի քանի քար պակասում են, որը ենթադրել է տալիս, թե այն եղել է շինության մուտքը: Սենյակի 0,40սմ բարձրությամբ պատերը բերված են մի հարթության: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ քարե հիմքի վրա բարձրացող շինությունը կառուցված է եղել մեկ այլ նյութով, ամենայն հավանականությամբ՝ փայտով, քանի որ աղյուսի հետքեր չկան: Սենյակի պատերն արտաքուստ ունեն կից դրված քարերի շարք, որով հավանաբար ամրակայվել են կառույցի հիմքերը: Պատերը 0 կետից ցածր են 13-16 սանտիմետրով: Ուշագրավ է, որ ներքուստ հատակ չի ֆիքսվել, չնայած կառույցի ներսում 0 կետից ներքեւ պեղվել է 60սմ: Սենյակի ներսից գտնվել են կենդանական ոսկորներ եւ խեցեղենի բեկորներ: Սենյակի հարավային մասը լցված էր անկանոն թափված մանր քարերով:

Այս տեղամասում 0 կետից 0,70-0,74սմ խորության վրա բացվել է պարսպապատի ներքին շարվածքը, որը որոշ հատվածներում չի պահպանվել: Այն հիմնականում միաշար է, բացառությամբ արեւմտյան 9 մ երկարությամբ երկշար հատվածի: Արդյունքում պարզվեց, որ 12,50 մ երկարությունից հետո պատը 6,70մ ընդհատվում է եւ նորից շարունակվում: Քառակուսի սենյակը տեղակայված է հենց այս բացակայող քարերի հատվածում:

Պարսպի ներքին պատից հյուսիս եւ քառակուսի սենյակից արեւմուտք ընկած տարածքը ծածկված էր անկանոն թափված քարերով, որոնք հեռացնելուց հետո բացվեց մայր հողը: Վերը նշված աշխատանքներին զուգահեռ մաքրման աշխատանքներ են կատարվել անմիջապես պարսպի վրա: Արդյունքում պարզվեց, որ պարսպի լայնությունը՝ 3,0մ- 3, 20սմ է, իսկ որմնահեցերի հատվածում՝ 3, 96սմ-4,70սմ: Պարսպի վրա թափված քարերը հեռացնելով փորձեցինք պարզել, թե արդյոք այս պարիսպը ամրոցի նախնա-

կան կառույցներից է, թե գործ ունենք վերակառուցման հետ: Սակայն, քանի որ ամրոցը խիստ ավերված է եւ պարսպից պահպանված են միայն հիմքերը, այս հարցը առայժմ մնում է բաց:

Քառակուսի սենյակի արեւմտյան պատից արեւմուտք պեղվեց 25,0 X4 մ չափերով մի փարածք, որտեղ թափված քարերը հեռացնելուց հետո ոչ մի շինության հետք չարձանագրվեց: Երկրորդ պեղավայրում մաքրվեց պարսպի շուրջ 22,70սմ հատված, որով նրա բացված ընդհանուր երկարությունը հասնում է 60 մետրի: Պեղումների միջոցին բացվեցին պարսպի եւս երկու որմնահեց, որոնք խիստ քայքայված են եւ գրեթե քարերի կույտի վերածված: Չափերի համեմատությունը նախորդ փարի բացված երկու որմնահեցերի հետ (չափերը թեեւ կանոնավոր չեն, սակայն որոշակի օրինաչափություններ ունեն) հիմք է տալիս ճշգրտելու նոր բացված որմնահեցերի չափերը: Երրորդ որմնահեցը (երկ. 2,80սմ) երկրորդից հեռու է 12,63սմ: Չորրորդի հեռավորությունը երրորդից շուրջ 10,20 սմ է (երկ.3, 38): Որմնահեցերի պեղումը դժվարացնում էին հաստաբուն ծառերի արմատները, որոնք սերտաճել էին քարերի հետ: Պարսպի արտաքին հատվածի պեղման աշխատանքների ժամանակ գտնված հնագիտական նյութը խիստ սակավ է: Այն կազմված է միայն խիստ բեկորային միջնադարյան խեցեղենից:

Պեղումների վերջին օրերին որոշակի աշխատանքներ կատարվեցին նաեւ ամրոցի հյուսիսային հատվածում՝ (10մX3մ): Այստեղ բացվեց 5 հսկա քարերից բաղկացած պարսպի արտաքին հատվածը՝ 6,70մ երկարությամբ: Այս շարվածքից աջ եւ ձախ մանր քարեր էին ընթերցվում եւ միայն հետագա պեղումների ընթացքում հնարավոր կլինի պարզել, պարսպի, կամ այլ ճարտարապետական կառույցի առկայությունն ու ուղղվածությունը: Այս փարածքում ճիմահողի 0,20 սմ հաստությամբ շերտի տակից դուրս եկող հնագիտական նյութերը հիմնականում ոչ մեծ քանակությամբ խեցատներ էին:

2008 թ. «Խաչեր» հնավայրում իրականացված պեղումների միջոցին գտնված նյութերի մեջ գերակշռողը հասարակ կենցաղային խեցեղենն է, որը խիստ բեկորային է: Այն հիմնականում դուրս է եկել 0 կետից մինչեւ 60սմ խորությունից: Գտնվել են նաեւ ջնարակած խեցեղենի սակավաթիվ բեկորներ:

Սենյակի արտաքին պատի հյուսիս-արեւմյան մասում, 0,47սմ խորությունից գտնվեց մի պղնձե խաչ: Հետաքրքիր է նաեւ իլիկի կոտրված գլխիկը: Մետաղե իրերից կարեւոր է նիզակի ծայրը, որը հայտնաբերվեց պեղավայրը հարթեցնելու ժամանակ: Սենյակի արեւմտյան արտաքին պատի մոտից, 0,40սմ խորությունից գտնվեց զառ, որի թիվ ցույց տվող կետերն ունեն յուրօրինակ դասավորություն: Պարսպապատի ներքին երեսից 0,90սմ հեռու(սենյակի արեւմտյան պատից 9,50սմ հեռու) գտնվեցին պղնձե ձողեր (80սմ խորությունից):

Հնավայրի պեղումներին զուգահեռ արշավախումբն ուսումնասիրել է հնավայրը կրող բլուրն ամբողջությամբ: Տեղանքի հետազոտությունը ցույց է տալիս, որ պեղվող ամրոցի պարիսպներից ներքեւ փարածված է եղել նրա մերձակա բնակավայրը: Այն ընդգրկել է ներկայիս Պետական բանկի փարածքի հյուսիսային հատվածները, դրանից դեպի արեւելք՝ օլիմպիական սպորտբազա տանող ճանապարհի, Հայ Առաքեւա-

կան եկեղեցու Կոտայքի առաջնորդարանի, «Լիյա» եւ «Վիարդո» հանգստյան տների եզրագծերը (տես՝ հանույթը):

Ծաղկաձորի հնավայրի երկամյա ուսումնասիրությունների կարեւորագույն գտածոն 2008 թ. օգոստոսի 1-ին հայտնաբերված դրամական գանձն է: Այն բաղկացած էր 297 բյուզանդական անանուն ֆոլիսներից, որոնք լցված էին Ժ.-դ. բնորոշ պուլիկի մեջ: Այն հարթ հատակով, ուռուցիկ իրանով, երկարավուն պարանոցով, լայն բերանով, իրանի վերին հատվածում չորս եղուստով զարդարված անոթ է: Դրամներից 294-ը անոթի մեջ էին, իսկ երեքը՝ անոթի տեղաշարժման հետեւանքով դուրս էին թափված: Պուլիկը բացվեց պարսպի ներքին պատի շարվածքի մեջ՝կիսաթեք դիրքով, պսակն ուղղված հարավ, 0 կետից 0,74 սմ խորության վրա:

Անանուն ֆոլիսները բյուզանդական պղնձե դրամների մի խումբ են, որոնք սկսվել են թողարկվել Հովհաննես I Չմշկիկ կայսեր ժամանակ (969-976) եւ շարունակվել նրա հաջորդների օրոք, մինչեւ Ալեքսիոս I-ի 1092 թ. դրամական բարեփոխումը: Քննության առարկա ֆոլիսների «անանուն» մերօրյա մակդիրը տրվել է այն պատճառով, որ դրամի վրա չի հիշատակվում իշխող կայսեր անունը, չկա նաեւ կայսեր պատկերը, դրամի անվանական արժեքը եւ դրամահատարանի հիշատակությունը, այլ գետեղված է Հիսուս Քրիստոսի կամ Մարիամ Աստվածածնի պատկերը եւ գրություն՝ «Հիսուս Քրիստոս արքաների արքա»: Ինչպես վկայում են դրամական գտածոները, չնայած 1059 թվականից վերսկսեց կայսեր անվան հիշատակությամբ (Կոստանդին X) պղնձե դրամների թողարկումը, այնուամենայնիվ, անանուն ֆոլիսները ոչ միայն մնացին շրջանառության մեջ, այլեւ շուկայում ունեին միեւնույն արժեքային հարաբերությունը[4]:

Վաղուց հաստատված է, որ անանուն ֆոլիսները սկսել են թողարկվել Հովհաննես I Չմշկիկի օրոք, որովհետեւ մինչ օրս հայտնի չէ նրա անունը կրող որեւէ պղնձե դրամ: Երկու կարեւոր հանգամանք ենս ի հաստատումն դրա. նախ անանուն ֆոլիսների A1 խումբը հաճախ թողարկված է լինում Հովհաննեսի I-ին նախորդող կայսրերի դրամների հենքի վրա, եւ երկրորդ՝ամենակարեւորը, պահպանվել է ԺԱ. դարի բյուզանդական սկզբնաղբյուր, որը վկայում է այս դրամների ծագման մասին[5]:

Անանուն ֆոլիսների դասակարգմամբ ուսումնասիրողները զբաղվել են դեռեւս ԺԹ. դարի վերջին: Մեծանուն մի քանի գիտնականների հետազոտությունների հիման վրա անանուն ֆոլիսները այժմ դասակարգված են 14 խմբերի՝A-N՝ այբբենական հաջորդականությամբ[6]: Այս խմբերի մեջ ամենաերկար ժամանակահատվածում (970-1030/35թթ.) թողարկված A տիպը իր հերթին բաժանվում է A1 եւ A2 խմբերի: Այս բաժանումը հիմն-

4 Տե՛ս **PH. GRIERSON, , A. BELLINGER,**, *Byzantine Coins in the Dumbarton Oaks and Whittemore Collections,* vol. III, part 2, Washington 1973, էջ 634:

5 Տե՛ս **GEORGIUS CEDRENUS**, *Ioannis Scylitzae ope ab Immanuele Bekkero*, ed. Vol. II., Bonn 1838-39, էջ 413-414:

6 Տե՛ս **W. WROTH,** , *Catalogue of the Imperial Byzantine Coins in in the British Museum,* Vol. II, London 1908, էջ 480-483. **A. BELLINGER,** *The Anonymous Byzantine Bronze Coinage, The American numismatic soiety NNM, No.35*, New York 1928, **M. THOMPSON,** *The Athenian Agora,* Vol. II, Coins, Princeton 1954, էջ 73-74: **PH. GRIERSON, A. BELLINGER,**, Vol III, part II, Washington 1973, էջ 634-647: **D. M. METCALF,** *Interpretation of the Byzantine 'Rex Regnantium' Folles of class A, c.* 970- 1030, *Numismatic Chronicle Vol. 10*, London 1970, էջ 199-219:

ված է մի քանի փասպերի վրա, ինչպես վերը նշվեց, A1 խմբի մեջ մեծ թիվ են կազմում վերաթողարկումները՝Հովհաննես Չմշկիկին նախորդած կայսրերի դրամների վրա: Մինչդեռ A2 խումբը միակն է, որ չի վերաթողարկվել մեկ այլ դրամի վրա: Մյուս տարբերությունն այն է, որ այս երկու խմբերի միջև միջին կշռային տատանումը գրեթե կրկնակի է: Ի տարբերություն A1 խմբի, A2-ի դիմերեսին եւ դարձերեսին առկա են զարդերի 60 տարբեր տեսակներ (չնայած այս տիպերը իրենց հորինվածքով եւ պատկերագրությամբ նույնն են):[7] Ծաղկաձորի գանձի նախնական հետազոտությունից պարզվեց, որ նշված 60 տարբերակներից այստեղ առկա են 24-ը:

Ծաղկաձորի գանձի բոլոր 297 դրամները A2 խմբի անանուն ֆոլիսներ են, որոնց դիմերեսին Հիսուս Քրիստոսի պատկերն է, իսկ դարձերեսին՝ քառատող գրություն. IhSUS / XRISTUS / bASILEUS / bASILE (ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ): A2 խումբը (976-1030/35թթ) սկսել է թողարկվել Վասիլ II օրոք (976-1025) եւ շարունակվել նրա հաջորդ Կոստանդին VIII (1025-1028) եւ Ռոմանոս III (1028-1034) կառավարման շրջանում: Ծաղկաձորից գտնված դրամները քիչ են մաշված, սակայն գրեթե հազար տարի գտնվելով հողի մեջ, պատված էին պատինային շերտով: Այս վիճակում գանձի ընդհանուր կշիռը կազմում էր 4493, 65 գ.: Գանձն, ըստ երեւույթին, թաղված է եղել ԺԱ. դարի 30-ական թվականներին, երբ ավարտվել է A2 խմբի թողարկումը: Անանուն ֆոլիսները՝ ե՛ւ առանձին, ե՛ւ գանձի տեսքով, բավականին տարածված են եղել Հայաստանում: Ավելին, բացառությամբ Ծեղդադյան դրամներից, բյուզանդական ոսկե նոմիսման եւ պղնձե ֆոլիսը միակ դրամական միավորներն են, որ շրջանառվել են ԺԱ. դարի Հայաստանում: Չնայած բյուզանդական անանուն ֆոլիսների թողարկումը ավարտվում է 1092 թվականին, սակայն Սիրիայում, Փոքր Ասիայում եւ Հայաստանում այս դրամները շարունակել են մնալ շրջանառության մեջ: ԺԱ. դարի վերջից մինչեւ ԺԳ. դարի սկիզբ անանուն ֆոլիսները Հայաստանում վերաշրջանառվել են նաեւ սելջուկյան մակադրոշմներով:

Ծաղկաձորի գանձը բացառիկ գյուտ է Միջնադարյան Հայաստանի ոչ միայն քաղաքական ու տնտեսական պատմության, այլ նաեւ դրամագիտական մի շարք կարեւոր խնդիրների լուսաբանման առումով: Մոտ 60 տարի թողարկված A2 խումբը ուսումնասիրողների շրջանում դեռեւս ունի չպարզաբանված հարցեր՝ ժամանակագրական հերթականության, դրամահատարանների, եւ այլ խնդիրների հետ կապված: Հնավայրերից, հատկապես գանձի տեսքով, գտնված դրամներն՝ իբրեւ ստվար հավաքածու կարեւոր են ուսումնասիրողների համար, եւ դրանց մանրակրկիտ հետազոտությունը թույլ կտա բացահայտել գիտության համար մինչ օրս մշուշոտ մնացած որոշ հարցեր:

«Խաչերի հանդ» ամրոցի ուսումնասիրությանը զուգահեռ արշավախումբը պեղումներ իրականացրեց նաեւ Ծաղկաձորի դամաբանադաշտում: Այն տարածվում է քաղաք մտնող գլխավոր մայրուղու աջակողմյան թաղամասում եւ նրա հյուսիսային եզրին՝ «Խարաբայի ջուր» կոչվող գետի հարավային լանջին: Բնակիչների տները մերձակա

7 **A. R. BELLINGER,** New York 1928, էջ 11-13. **PH. GRIERSON, A. BELLINGER,** ,անդ էջ 645: **D. M. METCALF,** *NC Vol. 10*, London 1970, էջ 206-207:











հողամասերով զբաղեցնում են արեւելքից-արեւմուտք ձգվող այս ընդարձակ դամբանադաշտի փարածքը: Այս հանգամանքը դարձել է դամբանադաշտի ավերման, դամբարանների զգալի մասի ոչնչացման հիմնական պատճառը: Դրան նպաստել են նաեւ փարիներ առաջ փարածքում կատարված ծառատնկումները:

Դամբանադաշտի մասին գիտական տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով արշավախումբը նախ հետախուզեց տեղանքը, լուսանկարեց դաշտի արտաքին մակերեսին ուրվագծվող սալերը եւ կառույցների հետքերը: Պարզվեց, որ դամբարանները տեղադրված են եղել խիտ շարքերով՝ արեւելքից-արեւմուտք, իրարից 2-5մ հեռավորությամբ:

2007 թ. դամբանադաշտում իրականացվելիք պեղումների համար փաստվեց դամբարաններից մի քանիսը եւ համարակալվեց արեւելքից-արեւմուտք 1- 5-ը:

Պեղումներով պարզվեց, որ թիվ 1,2 եւ 4 դամբարանները ավերված եւ թալանված են, միայն թիվ 2 դամբարանից պահպանված մի կողային սալին կպած հողից գտնվեց երկաթե դաշույն եւ սեւափայլ գնդաձեւ իրանով, սերմնանախշերով հարդարված կճուճի մի քանի բեկոր: Ոչ մեծ չափերի (երկ. 14սմ) դաշույնը երկսայր է, շեղբի կտրվածքում ռոմբաձեւ (երկ. 12.3սմ): Քառակող կոթը շեղբի շարունակությունն է կազմում, կռած է միակտոր երկաթից: Փայտյա կամ ոսկրե դասպակապանը ամրացնելու համար շեղբի եւ կոթի միացման տեղում ագուցվել է բրոնզե ձվածիր գոտեկապ-պահունակ, որի վրայի փոքր անցքերը ծառայել են մանր գամերով ամրացմանը: Նույն նպատակին է ծառայել նաեւ կոթի վերին ծայրին պահպանված քառակուսի գամը: Այսպիսի երկմետաղ դաշույններ Հայաստանում հայտնի են մ.թ.ա. I հազարամյակի սկզբներից, սակայն դրանց հանդես գալն արդեն նախապատրաստված էր վաղ բրոնզե դարաշրջանի վերջում զենքի եւ գործիքների առանձին մասերի տարբեր մետաղներից պատրաստելու եւ իրար միացնելու տեխնիկայի զարգացմամբ: Այսպիսի երկմետաղ զենքերի հանդես գալը վերաբերում է մ.թ.ա Գ. հազ. II կեսին, սակայն լայն տարածումը համընկնում է մ.թ.ա Թ.-Ը. դդ. եւ շարունակվում է մինչեւ մեր թվականության սկզբները:[8] Այդ նույն ժամանակաշրջաններով են թվագրվում նաեւ Հայաստանի՝ Կույբիշեւ, Թումանյան, Նոյեմբերյան, Ասպղի բլուր, Ժդանով, Նորատուս հուշարձաններից հայտնաբերված երկմետաղ դաշույնները[9]:

Անխաթար պահպանվել էին թիվ 3 եւ 5 դամբարանները: Դրանք կանոնավոր, ուղղանկյունաձեւ «քարարկղներ» են, որոնք ծածկված էին լայնակի դրված, հյուսիս-հարավ ուղղված սալերով եւ եզրաշարված մեծ ու փոքր քարերով: Ծածկասալերի (երկ. 1,27մ-1,96մ, լայն. 1,12-1,16մ) վրայի եւ շրջակա (4x4մ) մինչեւ 70 սմ հաստությամբ ճիմահողը հեռացնելուց հետո, երկու դամբարանների արեւմտյան ծածկասալերի վրա եւ հարեւանությամբ, մոխրախառն շերտում հայտնաբերվեցին մ.թ.ա. Ը.-Է. դդ. խեցեղենի բեկորներ, ածխի եւ ոսկորների կտորներ: Դրանք, ակներեւաբար, թաղման ծեսի վերջին,

8 **Н. Н. GOGHLAN**, Notes on Prehistoric and early iron in the old world, Oxford, 1956, էջ 62. **Ի. Ա. Կարապետյան,** Հայաստանի նյութական մշակույթը VI-IVդդ., Երեւան, 2003, էջ 66:

9 **Ս. Ա. Եսայան**, **Ն. Ա. Հովհաննիսյան**, Կարալոզ Դիլիջանի Երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի, երեւան, 1969, աղ. XXXVI; **А. А. Мартиросян**, *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ереван, 1964, таб.XXI/3, նկ. 834:

եզրափակիչ գործողությունների՝ հոգեհացի, ծիսական կրակի հետքերն են, որը բազմիցս փաստագրվել է Հայաստանի եւ հարեւան երկրների համաժամանակյա եւ ավելի ուշ թաղումների պեղումների ժամանակ:[10] Սալերի հեռացումից հետո պարզվեց, որ թաղման խուցերի պատերը շարված են հիմնականում մեկական հսկա սալերով (կողային սալերի երկարությունը 150-186 սմ է, իսկ ճակատայիններինը՝ 81-115 սմ):

Դամբանդաշտի լանջի թեքության հետեւանքով երկու դամբարանների արեւմտյան ճակատային սալերը խախտվել եւ կախվել էին դամբարանի ներքին տարածքի վրա, որով վնասվել էր այդ հատվածում դրված գույքը, հատկապես խեցեղենը:

Թաղման խուցերն ունեն կանոնիկ՝ հյուսիս-արեւելքից հարավ-արեւմուտք ուղղվածություն: Խուցերի ներքին չափերն են՝ թիվ 3-ը 169 սմx98սմx78սմ, իսկ թիվ 5-ը՝ 202սմx115սմx 90սմ:

Տեղանքի արտակարգ բարձր խոնավության հետեւանքով մարդաբանական նյութեր գրեթե չեն պահպանվել, բացառությամբ մի քանի ատամների: Այս պատճառով ննջեցյալների թաղման դիրքը, սեռն ու տարիքը հնարավոր չեղավ վավերացնել: Այս հարցերի լուծման վրա որոշ լույս է սփռում հանգուցյալներին ուղեկցող գույքի տեսականին, իսկ դրանց գտնված դիրքերի քննությունը: Այսպես, երրորդ դամբարանում խեցանոթների մեծ մասը դրված էին դամբարանի արեւմտյան հատվածում: Դրանք գոր մակերեսին հատիկավոր զարդեր, հորիզոնական փորագիր գոտիներ, գծիկներով լցված եռանկյունիներ, փայլեցումով արված ուղղահայաց գծեր կրող կճուճներ, միականթ գավաթներ եւ սափորներ են: Առանձնապես նշելու է մեծ չափերի, միականթ ընտիր փայլեցրած եւ զարդամոտիվներով հարդարված սափորը: Կարճ, դեպի դուրս լայնացող շուրթով ավարտվող վիզը միանում է հորիզոնական ուղիղ եւ ալիք գոտիներ կրող ուսերին, որտեղ հանդիպում է նաեւ շուրթից իջնող ոլորուն կանթը: Արեւմտյան եւ հյուսիսային պատերի մոտ էին դուրս գալիս հանգուցյալի զարդեղենը, կազմված բրոնզե մեկ եւ երկգալար ականջօղերից, մատանիներից, օղերից, ոլորուն մանյակից, կրկնագալար գույգ կախիկներից: Երկաթե առարկաներից դամբարանում գտնվեց մեկ կետ դանակ (երկ. 17 սմ) եւ մեկ մանգաղ, որոնք խիստ քայքայված էին: Ուղեկցող հուլունքները պատրաստված են սարդիոնից, ագատից եւ ապակե մածուկից (պաստա): Եթե քարե ուլունքները մշտական գնդաձեւ, գլանաձեւ տեսականիով են, ապա սպիտակ եւ կապույտ մածուկե հուլունքները բազմաձեւ են: Դրանք տարբեր չափերի են՝ գլանաձեւ, սկավառակաձեւ, ուղղանկյուն եւ քառանկյուն, խաչաձեւ, եռանիստ, շեղանկյուն: Կան նաեւ բաժանարարներ ու «դոմինոյաձեւ» տեսակներ (թվով 1500 հատ): Ամենաշատը գնդաձեւ երկգույն մանրուլունքն է, որը ցրված էր խցի ողջ մակերեսով: Մանրուլունքի մեջ 3:1 հարաբերությամբ գերակշռում է սպիտակ տեսակը: Զարդերի այս առատությունից, գենքի բացակայությունից, խեցա-

10 Տես **Հ. Ա. Мартиросян**, *Раскопки в Головино*, Ереван, 1954, с. 31-32. **Ն. Ռ. Իսրայելյան**, Պեղումներ Մաստարայում, ՀՍՍՀ –ում 1979-1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկ. թեզ., Երեւան, 1981, էջ 4. **Գ. Ե. Արեշյան**, Դահպանական պեղումներ Քանագեղի դամբանադաշտում, ՀՍՍՀ –ում 1979-1980թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկ. թեզ., Երեւան, 1981, էջ 3-4. **Ժ. Դ. Խաչատրյան**, Արտաշատ II, Երեւան, 1981, էջ 39. **Ի. Ա., Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 32:

նոթների զարդարուն նմուշների առատությունից ենթադրում ենք, որ այս դամբարանում կին է թաղված եղել:

Թեեւ թիվ 5 դամբարանում խեցեղեն նմուշները քանակապես առատ են եւ ամբողջական, բայց ձեւաբանորեն միօրինակ են՝ տարբեր չափերի միականթ գավաթներ, միականթ եւ անկանթ սափորներ, իրանի ուռուցիկ մասում երկկանթ անոթներ:

Այս դամբարանը առանձնանում է զենքի առկայությամբ՝ երկաթե երկու նիզակ (երկ. 24,5սմ եւ 27 սմ), երկու կեռ դանակ, երկու սրածայր կախված թեւեր ունեցող գլխիկով եւ քառակող պոչուկով բրոնզե նետասլաք(երկ. 11-12 սմ): Նիզակները միջին չափերի, լավ արտահայտված միջնաջիղով կոթից տերեւաձեւ շեղբին սահուն անցումներով տեսակին են պատկանում (երկ. 24,5 եւ 27 սմ): Այս նիզակներից մեկի շեղբի շարունակությունը հանդիսացող կոթառը 3 սմ քառակող է եւ հետո է լայնանում ու դառնում սնամեջ: Սրանով հարվածի ուժը մեծ է, որից կարելի է ենթադրել, որ նիզակը հետեւակ զորքի է ծառայել: Հետաքրքիր է դրանց տեղադրման դիրքը դամբարանում: Առաջին նիզակը բացվեց դամբարանի հարավ-արեւելյան անկյան մեջ մխրճված 0,2մ խորության, իսկ երկրորդը՝ հակառակ՝ հարավ-արեւմտյան անկյունում էր մխրճված 0,60մ խորության վրա: Այսպիսի իրավիճակ փաստվել է Գոլովինոյի թիվ1 կրոմլեխի, Թալինի մեծ դամբարանադաշտի թիվ 2 համաժամանակյա դամբարանների պեղումների ժամանակ[11] եւ Ն. Ենգիբարյանի պեղած Նոր Օշականի երկաթի դարաշրջանի դամբարաններից մեկում[12]: Առայժմ դժվար է ասել՝ այս երեւույթը նիզակների չափերի թելադրանքով է առաջացել, թե ինչ-որ ծեսի առկայություն է: Կեռ միաշեղը դանակները երկու տեսակ են: Առաջինը՝ մեծ չափերի է (երկ. 21սմ, լայնք. ծերին մասում 2սմ, բռնակի պահպանված մասը 5սմ): Շեղբի շարունակությունը հանդիսացող դաստակը կրում է դաստակալանները ամրացնող գամեր, իսկ երկրորդի դարձյալ շեղբի հետ կռած պոչը լեզվակաձեւ ագուցվել է դաստակալանի մեջ:

Երկու բրոնզե բեղիկավոր նետասլաքները (երկ. 5,6սմ եւ 13,5 սմ) տափակ, կենտրոնում հաստացում, եզրերում սրածայր կախված թեւեր ունեցող գլխիկով եւ քառակող կամ տափակ սրածայր պոչուկով տեսակին են պատկանում, որոնք պատրաստվում էին ձուլման եւ թեւերի եզրերը հետագա հեսանելու տեխնիկայով: Այս նետասլաքները Հայաստանում եւ Անդրկովկասում հանդես են գալիս մ.թ.ա. Թ.-Ը. դարերից եւ օգտագործվել են թե տեղական, թե ուրարտական ցեղի կողմից եւ տարածվել են Կովկասով եւ Առաջավոր Ասիայով մեկ[13]: Մասնագետներն իրավացիորեն դրանք սերված են համարում քարե նետասլաքների ձեւերից[14]: Այս նետասլաքների օգտագործումը շարունակվել է նաեւ մ.թ.ա. VI-IVդդ. երկաթե նույնատիպ տեսակների հետ[15]:

Դամբարանի կենտրոնական եւ արեւմտյան մասերից հայտնաբերվեցին հարթ

11 **А. А. Мартиросян**, *Раскопки в Головино*, с.32-33, таб.XIII, рис.11; **Ն. Գ. Ավետիսյան, Պ. Ս. Ավետիսյան,** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա.XI-VI դարերում, Երեւան, 2006, էջ 36, աղ. $61_2$:

12 Նյութերը հրապարակված չեն:

13 Տե՛ս **М.Н Погребова.,** *Иран и Закавказье в раннем железном веке,* М., 1977, էջ 74:

14 Տե՛ս **Б. А. Куфтин,** *Археологические раскопки в Триалети I,* Тб., 1941, էջ 67. **Е. И. Крупнов**, *Древняя история Северного Кавказа*, М., 1960, էջ 90:

15 Տե՛ս **Ի. Կարապետյան**, Նորաշենի վաղ հայկական ամրոցը. ՊԲՀ, 1874, թ. 2, էջ 287, գծագ.$III_{12,13}$:

եւ փորվածքներով զարդարված իրանով մապանիներ, ապարանջաններ, իսկ արեւելյան հատվածում՝ բրոնզե հաստ օղակ: Այս դամբարանում գտնված հուլունքների մեջ գերակշռում են սարդիոնե օրինակները, իսկ դամբարանի ողջ մակերեսով սփռված մանրուլունքի մեջ՝ երկնագույն տեսակը: Դատելով զենքի առկայությունից, խեցեղենի եւ հուլունքների տեսականու այս ընտրությունից՝ դամբարանի հանգուցյալը եղել է տղամարդ: Այն պարագայում, երբ զենքը եւ զարդերը հուլունքների մի մասի հետ տեղադրված են դամբարանի արեւմտյան հատվածում, իսկ խեցեղենը դամբարանի պատերի տակ շուրջանակի եւ ծանրացած են արեւելյան պատի տակ, կարծում ենք, որ հանգուցյալը թաղված է եղել գլխով դեպի արեւմուտք եւ քանի որ տղամարդ է՝ դեմքով դեպի հարավ, այսինքն աջ կողքի վրա:

2008թ. դամբանադաշտում հետախուզվեց 10x10մ չափերի մի նոր տարածք: Ճիմահողի հեռացումից հետո 0,20-0,27մ հողի շերտի տակ բացվեցին դամբարանի (թիվ 6) ծածկասալերը: Այն ուղղանկյուն սալարկղ էր, կառուցված հյուսիս-արեւելքից հարավ-արեւմուտք կողմնորոշմամբ: Դամբանախուցը բացվեց մեծ դժվարությամբ, քանի որ ծածկված է կտրուկ թեք լանջի վրա եղած այլ դամբարաններից սահած մեծ սալերով: Այդ սալերի եւ հողերի հեռացումից հետո պարզվեց, որ դամբարանը թալանված է: Ծածկի հսկա ծածկասալը անկյունագծով ընկած էր խուցի մեջ: Խուցի երկայնական պատերը շարված էին մեկական մեծ սալերով (170սմ x 75սմ), սեղանաձեւ էր, կառուցված էր տեղական թերթաքարերից, շատ խնամքով: Շրջապատի եւ ներսի հողերի միջից գտնված մի քանի խեցատներն իրենց տեխնիկական տվյալներով ժամանակակից են նախորդ՝ 2007թ. պեղված դամբարանի նյութերին:

Հաջորդ (թիվ 8) դամբարանը հայտնաբերվեց նախորդից շուրջ 25մ հարավ-արեւելք: Այստեղ մաքրվեց 4x3 մ չափերի մի տարածք, որի կենտրոնում ուրվագծվեց դամբարանը: Դրա ծածկի սալերից մեկն էր պահպանված, այն էլ սահած ընկած դամբարանի հյուսիս-արեւելյան կողմում: Դամբարանի խուցի երկարությունը 2,0մ էր, լայնքը՝ 0,80մ: Խուցի կողային պատերը շարված էին երեքական, ճակատայինները մեկական քարերով: Խուցի մաքրման միջոցին, նախկինի նմանությամբ, դրա արեւմտյան պատի հետնամասում եւ վրան գտնվեցին կոտրատած անոթների բեկորներ, սարդիոնե հուլունքներ, մածուկե բաժանարար: Մանր քարերով շարված պատից ներս բացվեցին խիստ քայքայված ոսկորներ, իսկ հարավ-արեւմտյան մասում գանգի ոսկորներ: Գանգից 10սմ ցած գտնվեցին ատամնավոր բրոնզե մապանի, սարդիոնե եւ մածուկե հուլունքներ: Հակառակ պատի տակ մաքրվեց ենջեցյալի ստորին ծնոտը, լավ պահպանված ատամներով: Այս մասում դրված էր ամբողջացող մի կճուճ եւ մյուսի վերնամասը՝ պսակի հատվածով: Սրանք սեւ փայլեցրած անոթներ են կուպաձեւ եւ փորագիր ալիքաձեւ զարդանախշով հարդարված: Դամբարանի տարբեր մասերից գտնվեցին նաեւ սարդիոնե գնդաձեւ, գլանաձեւ, ձվածիր-նիստավոր հուլունքներ, սպիտակ մածուկե բաժանարարներ եւ մանրուլունք: Դամբարանի կառույցի, կմախքի եւ նյութերի հայտնաբերման իրադրությունը թույլ են տալիս ասելու, որ այն եւս անխաթար չէ հասել մեզ:

Դամբարաններում սալերի վրա ու կից տարածքներից հայտնաբերված նյութերը միատեսակ են եւ միատարր: Հատկապես թվագրման կռվան հանդիսացող խեցեղենը,

որը պատրաստված է ավազախառը լավ հունցած-հասած կավից, թրծած է հավասար: Դրանք գնդաձեւ իրանով ցածր կարճ վզով եւ դեպի դուրս լայնացող պսակով միականթ սափորներ են, որոնց փայլեցված ուսերը, երբեմն էլ իրանը զարդարված են հորիզոնական եւ ուղղահայաց՝ ուղիղ եւ ալիքաձեւ մոտիվներով, ուսերից ցած կախված զիգզագներով լցված եռանկյունիներով, կատարված փորագիր, ներճկված, ռելիեֆ կամ փայլեցման հնարներով:

Կճուճները եւս գնդաձեւ, դուրս հակված շուրթով սեւափայլ անոթներ են, որպես կանոն ուսերին շեղ շարված փորագիր կուտաձեւ զարդամոտիվներով: Իրանի երկկոնաձեւ կամ ավելի սահուն անցումով միականթ գավաթները երբեմն հարթ, երբեմն ալիքաձեւ լուծում ունեցող վերնամասով են, որոնց կանթերը շուրթից իջնում են իրանի լայն մասի վրա: Հատկապես առատ են հարթ նստուկից դեպի վեր լայնացող, ապա սահուն դեպի վիզը նեղացող անոթները, որոնք ունեն նեղ վիզ, երբեմն շատ կարճ եւ դուրս շրջած շուրթեր: Այս անոթները, բացի մեկից, իրանի ամենալայն մասում ունեն կլոր կանթեր: Թվում է՝ դրանք օգտագործվել են հեղուկ կամ սորուն սննդամթերք պահելու համար: Այս անոթները մեծ մասամբ անզարդ են կամ ուսերին ունեն 1-3 հորիզոնական ներճկած գոտի: Խեցեղենի այս տեսականին առատորեն հայտնի է Հայաստանի եւ Անդրկովկասի մ.թ.ա. Ը.-Է. դդ. հուշարձաններից, հատկապես դամբարաններից[16]: Այս խեցեղենը մեծ մասամբ կրկնում է երկաթի դարի միջին շրջանի համալիրների գույքակազմը: Նույն պատկերն ենք տեսնում նաեւ զենքերի եւ գործիքների, նույնիսկ հուլունքաշարերի կազմության քննարկման ժամանակ: Դրանք նույնությամբ կրկնում են երկաթի ինտենսիվ յուրացման դարաշրջանի հուշարձաններից հայտաբերված տեսականին՝ Խրտանոցի, Սեւանի ավազանի, Հրազդանի կիրճի հուշարձաններից, Ռեդկին Լագեր, Ակներ, Լալվար եւ այլն թույլ են տալիս հաստատելու Ծաղկաձորի դամբանադաշտի թվագրումը մ.թ.ա. Ը.-Զ. դդ.: Դամբանադաշտի պեղումներով ձեռք բերված նյութերը, դամբարանների կառույցների միօրինակությունը, հանգուցյալի ուղղվածությունը կանոնիկ՝ արեւելք-արեւմուտք կողմնորոշմամբ, իրենց բազմաթիվ աղերսներն են գտնում նաեւ հարեւան երկրների նույն դարերով թվագրվող դամբարանային մշակույթներում: Ինչպես իր ժամանակին նկատել եւ հիմնավորել է անվանի հնագետ Հարություն Մարտիրոսյանը՝ այս մշակույթը համապատասխան սփռված էր Կուր եւ Արաքս գետերի միջագետքում[17], իսկ վերջին տարիներին Արեւմտյան Հայաստանի տարածքում կատարված պեղումների արդյունքները ասում են՝ նաեւ ողջ Հայկական Լեռնաշխարհում[18]: Ծաղկաձորի այս նոր պեղված դամբարանները գալիս են դառնալու այս խիտ ցանցի մի նոր կարեւոր օղակը:

16 **А. А. Мартиросян,** *Армения в эпоху бронзы и раннего железа*, с.205-206, 209, рис.51, $80_{2,}$ $81_{11}$. նույնի, *Раскопки в Головино*, էջ 88, աղ. XI, նկ. 5, աղ. $XIII_{19-22}$; **Լ. Ա.Պետրոսյան,** Պեղումները Սարապատում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987թթ. պեղումների արդյունքները) I, Երեւան, 1993, աղ. $XC_{1,2,6}$, աղ. $XCI_{1,2}$.

17 Տե՛ս **А. А. Мартиросян**, *Раскопки в Головино*.

18 Տե՛ս **V. Sevin,** *The Excavations at the Van Castle Mound*, p. 221-228.